# ԱՐԱՐԱՏ

## ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ։

ԹԻՒ Ը. — ՇՐՋԱՆ Է. **1874** ՏԱՐԻ Է. — ՕԳՈՍՏՈՍ 31

## ԿՐՕՆԱԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Շարունակութիւն)

Յովհաննէս Կաթուղիկոս Պատմաբանն նշանաւոր եղած է աւելի յայլազգեաց կրած տառապանքներով, չարչարանօք, բանտարգելութեամբ, հալածանօք, և թափառական աստանդականութեամբ, և թշնամեաց չար նպատակները իւր վերայ ծանրանալով՝ Ազգի և Եկեղեցւոյ կրելէք հարուածոց դէմ կմաքառէր. մանաւանդ օտարն բռնաւորն՝ զի տիրելոյն հնարիւք յաջողած էր երկպառակութիւն որոմնել Ազգի մէջ, փառասիրութեան ախտիւք մոլեալ մի անձն գտած էր՝ խոստանալով զնոյն ինքն թագաւորեցնել ի տեղի բնիկ թագաւորին կամ նորին հակառակ, որով օտարին զօրաց գործած աւեր և աստակութիւններէն զատ՝ համարիւն և համազգի եղբարց մէջ ես երկու իրերահակառակ բանակ կազմելով՝ միմեանց արիւնը անխնայ կթափէին, իւրեանց տուները՝ ինքնին քան զթշնամիս աւելի վատթարագոյն կքանդէին, և ուրիշ բան մըտածելոյ ժամանակ չկար, միանգամայն գոգցես ոչ Եկեղեցւոյ և ոչ Ազգի օգուտ և փրկութիւն նոցա համար էր։

Ահա այսպիսի դառն ժամանակի և բազմաղէտ տեսարանի վիճակուած էր Յովհ. Կաթուղիկոս, ինչպէս ինքն կպատմաբանէ, և այնքան ցաւալի կներկայացնէ, զի ընթերցողի սիրտ չհանդուրժեր տանիլ և աչքերն չդադարին արտասուաց հեղեղներ հոսելէն։ Եւ դիւրին չէ՞ իմանալ թէ՝ արդեօք նոյն անցից ականատես և աւելի ենթակայ եղող Կաթուղիկոսն ինչպիսի՜ աղեկտուր և սրտամաշ վիճակի և զգացմանց մէջ կճմլվէր, ի՜նչպէս կտագնապէր իւր սիրելի հօտը միաւորելոյ, երկպառակութիւնը ջնջելոյ, հակառակորդները հաշտեցնելոյ և զԵկեղեցին ազատելոյ համար, թէպէտ օտարն՝ որ այս ամեն չարեաց նիւթիչ և դարանակալ կգործէր իւր չար նպատակները արդիւնաւորելոյ համար, տեսանելով Կաթուղիկոսի ջանքը և

ազդեցութիւնը*)՝ ընդդիմացաւ նորա հետեւէն, որոգայթներ լարեց, կալանաւորեց, չարչարեց, եւ այսպէսով կարծեց զբաղեցնել եւ միջոց չտալ՝ որ նա իւր հնարից դէմ դնէ եւ զինքն ապարդիւն խայտառակէ՝ հաշտութիւն եւ խաղաղութիւն տալով երկու հակառակորդաց եւ նոցա կուսակցաց, եւ ապա միաբանին եւ զինքն հեռացնեն։

Այսպիսի ժամանակաց մէջ՝ Հայոց դըրութեան հետ նա եւ ազգային դաստիարակութիւնը սկսուած էր աղօտանալոյ, Հայաստան երկիրը ալեծածան ծփալով խըռովութեանց եւ ապստամբութեանց մէջ, ինչպէս նա եւ Յունաց յարձակմունքներէն զատ՝ նոցա կրօնամոլութեան ժանտախտի եւ կրօնական եւ ազգային նենգաւոր դաւանակալութեանց մէջ, եւ վանքերն սկսան կեդրոններ լինել ուսումնասիրութեանց, որոց մէջ սակաւք ոմանք նշանաւոր եւ արդիւնաւոր հանդիսացան, իսկ Ազգն՝ զինքն պատսպարելոյ եւ պահպանելոյ միայն հնարելոյ միջոց կմտածէր եւ կը գտնէր, Եկեղեցւոյ պաշտօնէից ստուար մասն զԵկեղեցին պաշտպանելոյ հետ՝ ժողովուրդը մխիթարելոյ եւ ազատելոյ միջոցաց հոգլու կրաւէր հասանել, որով գրականութիւնն աւելի ժամանակակից անցքերը աւանդող պատմաբանութեամբ բովանդակեցաւ, եւ սակաւ կրօնական եւ մեկնաբանական երկասիրութիւնք յաւելացոյց Զ. — Թ. դարուց մէջ։

Բագրատունեաց հարստութիւն եւ իշխանութիւն՝ ժամանակակից ունենալով եւ ենթարկուելով բաց ի Յունաց եւ ի Պարսից՝ նա եւ Հագարացւոց, Արաբացւոց եւ հիւսիսային խառնուրդ ազգաց դաշնակցութեանց յարձակմանց եւ թըշնամութեանց, գոգցես աւելի աղէտաբեր եղաւ Հայոց Ազգի եւ Եկեղեցւոյ համար, եւ Մարզպանաց եւ Ոստիկանաց ժամանակի հարուածներէն աւելի չարեաց հանդիպեցաւ եւ ընդ իւր տագորեցաւ ի վիշտ Եկեղեցին եւ Ազգն անբաժան եւ ըստ ամենայնի հաղորդակից գտնուելով։ Ո՜ր մնաց որ՝ Հայ դպրութիւնը ծաւալէր եւ աւելի հարստանար պարապաւորիչ հետեւողութեամբ՝ ինչպէս պարտ եւ արժան էր։ Հազիւ վանօրէից ուժ տրուեցաւ, եւ նոցա մէջ պահպանեցին այն արուեստը, որով կարծես ուսումն եւ դպրութիւն միայն եւ մի միայն եկեղեցականաց յատկանալոյ հետեւանքն ստացաւ։

---

(*) Մեր Ազգային եւ Եկեղեցական պատմութեան հմուտ անձինք անշուշտ նկատած կլինին, զի ինչպէս այս Յովհաննէս Կաթուղիկոսի, նոյնպէս եւ այլ անցեալ եւ յաջորդ դարուց եւ ժամանակաց մէջ մեր Եկեղեցւոյ Հայրապետաց գրեթէ առհասարակ յօտարաց կրած հալածանաց, նեղութեանց, հարստահարութեանց, շղթայակիր չարչարանաց, բանտարգելութեանց առիթ տըւած են նոցա նուիրապետական եւ նախամեծար գիրքն թէ Ազգի եւ թէ Եկեղեցւոյ մէջ, ուստի օտարք կամ թշնամիք ամեն ժամանակ՝ երբ իւրեանց նպատակաց ընդառաջ յաջողութիւն կը վայելէին, նախ եւ առաջ կջանային իւրեանց ամեն հնարքը ի գործ դնել Հայոց Հայրապետները ճնշելոյ եւ տկարացնելոյ համար, որպէս զի իւրեանց առջեւ եղած մեծ արգելքին գլխաւորն թեթեւցած լինի, որով միանգամայն երկիւղ եւ սարսափ ազդեն Ազգի վերայ։

Այսպիսի ջանքեր շատ ազգաց մէջ միշտ եւ ամեն ժամանակ երեւցած են եւ կերեւին։ Սակայն յաւէտ յաջողած են եւ ո՞րքան արդիւնաւորուած, դարձեալ պատմութիւնք կհաւաստեն։

Սակայն Եկեղեցւոյ Նուիրապետութիւն եւ պաշտօնեայք՝ ճշմարիտ անձնանուիրութեամբ՝ իւրեանց ունեցած նախանձաւոր եւ նուիրական աստիճանի համաձայն քաջ գիտցած էին եւ գիտցան իւրեանց պարտաւորութիւնքը յաւէտ եւ ամեն պարագայից մէջ արդիւնաւորել: Մինչ նախարարք եւ թագաւորք շատ անգամ երկրի աղէտից պատճառ կգտնուէին կամ անտարբեր կմնային, նոքա ըստ սովորութեան՝ ինչպէս միշտ եւ ամեն ժամանակ՝ զԵկեղեցին եւ ժողովուրդը պաշտպանելոյ հետ ի միասին՝ հաշտութիւն եւ խաղաղութիւն սփռելոյ հնարներ կմտածէին եւ կարդիւնաւորէին, ըստ նոյնոյ ժամանակին՝ Հայ դպրութիւնը կպահպանէին եւ կտարածէին, վանքերը օգտակար գրոց կենթարկէին եւ շէն կպահէին, Յունական նենգ խորհրդոց դէմ անվկանդ եւ անվեհեր կմաքառէին, նոցա որոգայթները կը փշրէին, միանգամայն՝ հարազատ եւ ճշմարիտ հայր եւ պաշտպան էին Եկեղեցւոյ եւ Ազգի:

Սորա փոխարէն՝ ժողովուրդն եւս քաջ զգաց եւ գիտաց իւր Կրօնը եւ զԵկեղեցին ամեն բանէ աւելի պաշտպանել եւ պահպանել, կարողացաւ ներել եւ զոհել իւր քաղաքական իշխանութիւնը, բայց միշտ եւ հանապազ ամուր բռնեց եւ փառաւորեց Կրօնը եւ Եկեղեցին, եւ սորա համար անթիւ եւ դժոխային նեղութեանց, հալածանաց, սրածութեանց եւ աւերմանց հանդիպեցաւ եւ տարաւ: Գիտաց սիրել իւր հոգեւոր հայրերը՝ Եկեղեցւոյ պաշտօնեայքը՝ որք յաւէտ իւր օգտին եւ գոյութեան եւ ազգային յատկութեանց պահպանութեան համար անձնանուէր եւ անձնեան էին եւ հանդիսացան, նոքա միայն յաւէտ միջնորդ եւ խաղաղարար փայլեցան իւր եւ Թագաւորութեան եւ Նախարարութեանց մէջ, ինչպէս նա եւ օտարաց առջեւ: Ասոր համար զինքն նոցա խնամոց եւ պաշտպանութեան վայելեց նոցա բարերարութիւնքը եւ արիագործութիւնքը, մխիթարեցաւ նոցա Առաջնորդութեամբ, եւ խանդակաթ ջանք ունեցաւ թէ ըստ հոգւոյ եւ թէ ըստ մարմնոյ անսալ նոցա խրատից եւ հրահանգաց:

Ազգային եւ Եկեղեցական պատմութիւնք առաւել քան զայսօրիկ լիովին եւ մանրապատում կերաշխաւորեն մեր խօսքերը, եւ թէ քանի ընդարձակ եւ ճոխ խորհրդածութի այսպիսի խնդրոց վերայ՝ ունի իւր արժէքը՝ յարգը եւ օգուտները:

Այսպիսի անցից մէջ նշանաւոր եւ ուշադրութեան արժանի է այս, զի Եկեղեցւոյ պաշտօնեայք երբ բաւական զարգացած էին եւ ճոխ ըստ մտաւորականին եւ բարոյականին՝ Ազգի եւ Եկեղեցւոյ վիճակ բարերագդ էր, եւ որքան օտար յարձակումներ յաճախէին եւ գործեր նիւթուէին՝ հալածում ենթադրելով՝ աւելի սերտ սիրով կմիաբանուէին համայն Ազգն ընդ Կրօնական պաշտօնեայս. իսկ երբ ժողովուրդն եւս բաւական մտաւոր նոյն վիճակին կհետեւէր եւ ի նմին կկըրթուէր, օգուտք եւ յառաջադիմութիւնն գերազանց կպատահէին եւ բազմապատիկ կպանծային:

Ի սոցանէ դիւրին է մակաբերել եւ եզրակացնել, զի Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտօնեայք միշտ կջանային ոչ միայն Կրօնի ուսումն, այլ եւ ըստ ժամանակին՝ արտաքին գոյզն ինչ գիտութիւնքը

ազգային դպրութեան և դաստիարակութեան հետ ժողովրդեան մատակարարելոյ մեծ ճիգ ունէին և հետամուտ էին, և նոցա համար ներելի չէր և չէ միայն Եկեղեցւոյ պաշտօնեայքը ուսմամբք և այլովք զարգացնել՝ իսկ ժողովուրդը ի խաւարի պահել՝ ինչպէս որ այլոց Եկեղեցեաց և Ազգաց ընթացքն սոցա հակառակ էին։ Այսպիսի բարի նպատակներէն կշեռուէին՝ երբ յանդուգն և խիզախ և յաճախ յարձակմանց և հալածանաց ներքև ճնշուէին, ինչպէս կտեսնուի աւելի Ե-րդ դարէ սկսեալ Հայոց Եկեղեցւոյ անցելոյն և շարունակութեան մէջ։

Ուրեմն նաև Ը, Թ, և Ժ, դարուց մէջ Հայերէն Դպրութեան խանգարեալ և տխուր վիճակ ժամանակի դառն պատահարաց անհրաժեշտ բերմունք էր, և այնպիսի ժամանակաց մէջ մի քանի նշանաւոր Վանօրէից՝ — ինչպէս են Մակենոցաց մենաստանն, Օձբէոյ ուխտն, Մշոնեցանեցի կամ Զորվարէից վանքն, Թանահատ, Հերմոնավանք, Արտեհեաց վանք, Գընդուզ վանքն, և Հոռոմոսին, Սղնամոր, Խոտակերից վանքն, Սևան և Տաթև, Կամրջաձորոյ վանքն, Հնձուց կամ Կարմիր վանքն, Նարեկայ վանք, Արգարանեաց ուխտն, Ցախացքար մենաստանն, Մարմաշէնն՝ և այլք, — ըստ Ուսումնականին և Բարոյականին ունեցած արդիւնաւոր գիրքն և ջանքերն՝ մեծ պարծանք էին ի ժամանակին, որոց յիշատակներն անգամ ապագայից նուիրական պիտի լինին և են։

Սոքա՝ այնպիսի ժամանակաց մէջ՝ յորս երբ Հայրապետական Աթոռն անգամ պարտաւորուեցաւ պանդխտիլ ի Ս. Վարէս հեռանալով՝ բաց ի Դունայ՝ ի Զորովանս ևլն, յԱնի ևլն, սոքա կըկրկնեմ՝ Ազգի և Եկեղեցւոյ Պահապան — Հրեշտակներ հանդիսացան, Հայ. Գրականութեան Պաշտպան, Ազգային յատկութեանց Աւանդապահ, և Հայրապետութեան ամուր պարիսպներ կանգնեցան։

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

# ՊԱՏՄԱԿԱՆ

## ԱՍՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՉԱԿԻՐՔ.

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆԱՑՒՈՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

(Շարունակութիւն)

Խաչակիրք կը համարուին որպէս ժողովրդային մի երկրորդ գաղթականութիւն, բայց որոշակի հինգերորդ դարու գաղթականութիւնից, զի սոցա նպատակն էր գտանել բնակութիւնք յաղագս մի ամբողջ Թափառուն ժողովրդեան. իսկ երկրագնտի այդ միջօրային ծնունդ տուող պատճառքն էին շահատակութեան սէրը, մարդկային սեռի քաղաքական բարգաւաճումն, որ ծնաւ ճերոսք հանգոյն դիւցազանց Տրոյիոյ եւ Արգոնաւորաց. այլ եւ վաճառականութեան ճետադօտիչ ճանճարը:

Այն ընդհանուր յուզմանց ժամանակ Գերմանական ժողովուրդք սակաւ հակամիտութիւն կը ցուցանէին, պատճառ որ, պատաղուելով իւրեանց քաղաքային երկպառակութեամբ՝ չէին կարող մասնակցիլ մի դոյնպիսի տար արշաւանաց: Միայն յուղկահարաց մի քանի հրոսք, ընդ առաջնորդութեամբ խռովարար քահանայից, որոց աւելի ի ճահ գայր պատերազմել քան պատարագել, փութացան մասնակցիլ դոյն ուղեւորութեան: Բայց գետեղեսցուք աստ գլխաւորաց անուանքըն:

Րայմօն Տը Սէն Ժիլ, կոմս Թուլուզի, հին պատերազմականն Թողու իւր հայրենիքն եւ գնաց նուիրել